Գուրգեն Մահարի

Սեւ մարդը

2

. . . Կիա գետից ոչ հեռու, դեպի հյուսիս արևելք, ոչ խիտ անտառներով շրջապատված ընդարձակ մի բացատի վրա փռվել է աշխատանքային ուղղիչ ճամբարը, շրջափակված տախտակե սրածայր ցանկապատով և փշալարերով: Երեկո է, մեկը սիբիրյան այն երեկոներից, երբ երկինքը կարծես այնքան մոտ է երկրին, որ թվում է թե նա՝ երկինքը, հաստատված է ծխնելույզներից վեր բարձրացող, անշարժ թվացող ծխե վիթխարի սյուների վրա: Աստղերը մոտ են թվում, այնքան մոտ, որ թվում է հսկիչ աշտարակի վրա կանգնած գիշերային պահակը կարող է վառել իր ծխամորճը, եթե մի քիչ նեղություն քաշի, բարձրանա ոտքի թաթերի վրա, վիզը բարձրացնի վեր և ծխամորճը պարզի դեպի աստղերը . . .

Աշխատանքային ուղղիչ ճամբարի համար յոթ բարաքի բնակիչները ընթրիքից հետո հանգստանում են: Նրանցից շատերը զբաղված են հաստ բամբակե կամ բրդե գուլպաները նորոգելով, ոմանք կարդում են նոր ստացած նամակները և նրանց դեմքերի արտահայտությունից դժվար չէ գուշակել նամակի բովանդակությունը: Երկհարկանի տախտակամածների վրա նստած են նրանք, պառկած կամ կիսապառկած . միայն գլխի կողմից իրարից բաժանված փոքրիկ, տախտակե արկղիկներով, որոնց վրա վառվում են դեղորայքի փոքրիկ շշիկներից հարմարեցված ճրագները: Ուզբեկ Նուրանբայը, վառարանի մոտ նստած մի կոճղի վրա, վառ է պահում վառարանի կրակը: Ամեն անգամ, երբ նա վառարանի կրակին է հանձնում մի քանի կտոր փայտ, ձախ ձեռքի չորս

մատներով ստուգում է իր ցանցառ բեղերի ու մորուքի գոյությունը և գոհ, որ նրանք տեղում են՝ նորից անշարժանում է կոճղի վրա, չինական արձանի նման, հայացքը վառվող կրակի բոցերին:

Ես ուզում եմ փակել աչքերս և անձնատուր լինել Մորֆեոսին, բայց այդ ժամանակ զգում եմ, որ մեկը քաշում է ոտքս: Նստում եմ: Ներքևում կանգնել է իմ վարպետը, բրուտ Աշոտ դային:

— Բարձրացիր, — ասում եմ ես, — քնելու ժամանակն է:

Հիսունից անց է, Աշոտ դային, խիտ մազերն ալեխառն են, սև հոնքերի տակից նայում են մի քիչ թախծոտ, մի քիչ ժպտուն աչքերը . նա բռնում է սյունը և թեթև բարձրանում ու նստում է իր անկողնու վրա, վալենկաներով պաշտպանված ոտքերը կախելով ներքև:

— Տո՛ւր մախորկադ:

Իսկ Աշոտ դային ծխում է տարվա ընթացքում միայն մի քանի անգամ, այն էլ, երբ մի արտակարգ դեպք է պատահում նրա հետ, կամ ընդհանրապես, կյանքում: Ես հիշեցի, որ վերջին անգամ նա ծխեց երեք ամիս առաջ, երբ բացեց թրծարանը և տեսավ, որ կավե ամանների մեծ մասը ճաքճքել էր:

— Ուժեղ կրակից է . . . Շատ եմ թեժացրել քուրան, — ասաց նա և մի ծխախոտ ոլորեց:

Հիմա էլ նա ծխում է արցունքոտված աչքերով՝ հազում է ծխին անվարժ մարդու հազով, իսկ ես սպասում եմ, թե ինչ պիտի ասի նա:

— Տայշետից էտապ եկավ, — ասում է նա:

— Լսեցի, — ասում եմ, — նորություն չէ, պառկիր, հանգստացիր:

Նա գլուխը բացասաբար շարժում է:

— Լողանում են: Քիչ հետո գնամ տեսնեմ: Կոմենդանտն ասաց՝ մի հայ կա մեջները:

Էտապում մի հայ կա — ահա թե ինչու այս անգամ ծխեց Աշոտ դային:

Կիսատ ծխած ծխախոտը նա շպրտեց վար, հետո ասես անդրադառնալով՝ վար իջավ, ծխախոտի մնացորդը վերցրեց հատակից, նետեց վառարանի անցքից ներս և՝

— Ես գնացի:

Ու գնաց թեթև քայլերով:

Գնաց Աշոտ դային, իսկ իմ քունը փախավ: Որպեսզի միտքս մի բանով զբաղեցնեմ, ես սկսեցի մտքումս զանազան բառեր արտասանել հակառակ կողմից . — կաչաղակ-կաչաղակ, թութակ-կաթութ, լուցկի-իկցուլ, Արարատ-տարարա, բայց շուտով ձանձրացա դրանից էլ և երևակայությամբ սկսեցի վար իջնել Երևանի Աբովյան փողոցով, բաց չթողնելով ոչ մի մանրամասնություն, ապա մտքով թռա Թիֆլիս քաղաք և Երևանյան հրապարակով սկսեցի բարձրանալ Ռուսթավելու պողոտան ի վեր: Թիֆլիսի օպերային չհասած եկավ Աշոտ դային:

— Ի՞նչ պտուղ էր, — հարցնում եմ ես:

— Պտուղ չէր, ծաղիկ էր, — լինում է պատասխանը: Հոգեբան լինելու կարիք չկա զգալու համար, որ նա դժգոհ է, ավելին, դառնացած:

Նա բարձրանում է և սկսում է հանվել:

— Ինչո՞ւ լույսը չես վառել, — հարցնում է նա:

— Ի՞նչ ես անում լույսը:

— Առանց լույսի . . . — նա շրխկացրեց լուցկին, վառեց պատրույգը և վերջացրեց, — տխուր է: Իսկ հիմա . . . Տո՛ւր մախորկադ:

Այս արդեն արտակարգ երևույթ էր: Մի երեկո՝ երկու ծխախոտ: